

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«Եւ զԱռաջնորդ կենաց սպաննիք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց, որում մեք իսկ վկայեմք»:

«Եւ սպաննեցիք կեանքի Առաջնորդը, որում Աստուած յարուցիւն տուաւ մեռելներէն. որում մեք իսկ վկայ ենք»:

(Գործք Առաքելոց Գ:15)

Շաբթուան առաջին օրը, Իւղաբեր կիները գերեզման կ'երթային հրէական օրէնքին պահանջներուն համաձայն անուշահոտ իւղերով օծելու մարմինը իրենց նոր մահացած սիրեցեալ Վարդապետին: Սակայն մեր միտքերուն մէջ մենք գիտենք թէ անոնք ի՞նչ պիտի գտնէին հոն, թափուր գերեզման մը: Անոնք ծանր սիրտով կ'երթային կատարելու կրօնական այդ տիտուր պարտականութիւնը: Անոնք կ'երթային ո՛չ թէ կեանք գտնելու, այլ անշունչ դիակ մը, իւղերով օծելու:

Մեզմէ շատեր եւս կեանքին կը նային նման այդ Իւղաբեր կիներուն, որոնց մտքին մէջ մահն էր վախճանը մարդուն, ու մենք նման այդ կիներուն, որոնք աղջամուղջին կ'երթային իրենց Վարդապետին գերեզմանը, տակաւին կը քալենք մեր կեանքի աղջամուղջին մէջ: Անոնց համար իրենց սիրելի Վարդապետին եռօրեայ թաղումը եղած էր լքուածութեան եւ անորոշութեան օրեր: Արեւը եւս արեան մէջ կորած էր, եւ յոյսի ամէն նշոյլ ընդմիշտ անհետացած, որովհետեւ Ան՝ որուն իսկապէս կը հաւատային ու կը սիրէին եւ իրենց համար բան մը կ'արժէր, հիմա դրուած էր հասարակ գերեզմանի մը մէջ, ու չկար մէկը որ մխիթարէր զիրենք, կիսէր իրենց ցաւերն ու մտահոգութիւնները:

Իւղաբեր կիները, որոնք Զատկական այդ արշալոյսին կու գային մահը տեսնելու, սակայն անոնք իրենց ակնկալածէն տարբեր բան մը պիտի գտնէին. իրենց սիրեցեալ Վարդապետին գերեզմանին քարը գլորած էր, եւ գերեզմանը, ուր տակաւին երեք օրեր առաջ հանգչեցուցած էին անոր չարչարուած մարմինը՝ հիմա պարապ էր, եւ հրեշտակներուն աւետիսը, թէ «Ինչո՞ւ ողջը կը փնտռէք մեռելներուն մէջ» պիտի գար առաքեալներու միտքերուն մէջ յստակացնելու այն տարտամ խօսքը, որ Տէրը ըրած էր ժամանակին, ակնարկելով յետ մահու իր վիճակին մասին: Հետաքրքրականօրէն առաքեալները սկիզբը կասկածով առին լուրը Մագդաղենացիէն, սակայն այս մէկը անհաւատօրէն բացառիկ լաւ լուր մըն էր, բայց եւ այնպէս կ'երեւէր թէ անոնք տակաւին կը սպասէին մէկը որ զիրենք խթանելով արթնցնէր:

Անոնք այլեւս վստահ էին թէ իրենց Տէրը յարութիւն առած էր այն գերեզմանէն ուր տակաւին մի քանի օրեր առաջ իրենք բեկուած սիրտով հոն հանգչեցուցած էին անոր մարմինը: Սակայն հրեշտակին աւետիսը, «Զէ աստ, այլ յարեաւ», կու գար անմիջապէս յարութիւն տալու Իւղաբեր կիներուն, ինչպէս նաեւ առաքեալներուն, իրենց Տիրոջ հետ թաղած ուրախութիւններուն, թէ իրենց Տէրը ողջ էր ու կ'արթնար. եւ այս լուրը անմիջապէս սկսած էր շրջիլ բոլոր անոնց մէջ, որոնք ճանչցած էին զինք եւ վախճած իր բարութիւնը:

Այսպէսով քրիստոնէական նոր կրօնքը կու գար հիմերը դնել իր հիմնադրին թա-

փուլը գերեզմանին, որ է Յարութեան հաւատքին վրայ: Անշուշտ տարակոյսը տարիներ ետք պիտի փորձէր պայքարիլ փոքրաթիւ մարդոց կողմէ շահուած յաղթանակին դէմ, սակայն կարելի չէր «աքացի զարնել խթանին», որովհետեւ եղածը այլեւս հաւատքի հաստատում մըն էր, որ պիտի շարունակէր իր ընթացքը ամբողջ դարերու մէջէն: Հարցը երբ առնչուած է իմացականութեան վերաբերող նիւթի մը, մարդկային միտքը կրնայ դեղեւիլ շինծու ապացոյցի մը առաջ, սակայն երբ ան կը վերաբերի հոգիին՝ հակասող ոյժեր ստիպուած զինաթափ կ'ըլլան ու տեղի կու տան, որովհետեւ երբեմն մարդկային համոզումները ենթակայ են խախտուելու, եւ հետեւաբար ընդմիշտ քայքայման, սակայն հաւատքի պարագային ան սիրոյ նման մահուան չափ կը մնայ հզօր, որուն համար ալ Ֆրանսացի իմաստասէր՝ Վոլթէռ պիտի ըսէր. «Դժուար է հաւատալ Աստուծոյ, սակայն աւելի դժուար է չհաւատալ Անոր»:

Եւ այսօր, երբ քսան մէկ դարերու անջրպետ մը մեզ կը բաժանէ առաքեալներու եւ անոնց անմիջական հետեւորդներու փաղանգէն, այս օրերուն մանաւանդ երբ ներկայ դարու քրիստոնեային համար դժուար է հասկնալ Առաջին դարու ապրող քրիստոնեային հոգեվիճակը եւ ըմբռնել ծալուած վարչամակի մը եւ կամ թափուր գերեզմանի մը թաւալուած կափարիչին իրողութիւնը, ահա այս է որ կը դառնայ Աստուածորդւոյն կեանքի պատմութեան մեծագոյն հրաշքը, իր Յարութիւնը՝ որուն հանդիսարանը կը դառնար իր իսկ թափուր գերեզմանը: Հո՛ն ուր մարդիկ կը խորհէին թէ վերջացած էր այլեւս անոր կեանքն ու առաքելութիւնը, սակայն այդ միեւնոյն վիճակի գերեզմանին մէջ անոնք կու գային վերանորոգուելու, եւ իր կեանքին վկայարանը, «մահուամբ զմահ կոխեաց»-ը պիտի դառնար վկայութիւնը իր իսկ անմահութեան: Աւագ Շաբթուան պատմութիւնը ցաւալի պատմութիւնն է երեսուն արծաթ արժող մատնութեան մը, սուտերու, կեղծիքի, ծաղր ու ծանակի եւ մանաւանդ անհաւատարմութեան, հանդէպ՝ երկիր իջած անմեղ եւ լքուած Աստուածորդւոյն, որուն համար ալ Ան՝ պիտի ըսէր. «էլի, էլի, լամա սաբաքթանի», որմէ ետք Ան պիտի առաջնորդուէր Գողգոթա՝ ուր պիտի բեւեռուէր մահափայտին եւ մի քանի ժամեր ետք աւանդէր հոգին առ Աստուած եւ արժանանար աննշան եւ հապճեպով կատարուած թաղման մը: Սակայն դարձեալ, խաւար գերեզմանն ու մահը ի զօրու չեղան պարփակել մարմինը Անոր, Ան՝ որ Ալֆան էր եւ Օմեկան այս աշխարհին: Անշուշտ Աստուածորդւոյն մահը վերջակէտը պիտի չըլլար այս յանկուցիչ ու սրտագրաւ պատմութեան: Տակաւին կը մնար վերջին եւ ամենակարեւոր գլուխը, ուր հաւատացեալը ականատես կ'ըլլար Անոր հրաշալի եւ փառաւոր Յարութեան: Իր թշնամիները շփոթած ու ամօթահար կը քաշուէին իրենց պատեաններուն մէջ, իսկ Արքան Հրէից Խաչափայտի ստորնացնող դէպքէն վերջ կ'արժանանար իր Երկնաւոր Հօր փառքի իրականութեան: Որքա՛ն մխիթարական է գիտնալ թէ ճշմարտութիւնը ամբաստանել, դատել, չարչարել, նոյնիսկ խաչ հանել, սպաննել եւ թաղել, բայց ան երրորդ օրը դարձեալ յարութիւն պիտի առնէ, հետեւաբար մենք պարտինք շարունակել պայքարիլ ճշմարտութեան եւ արդարութեան համար, որովհետեւ ասոնք յաւիտենական են եւ իրաւ, եւ յաւիտեանէ-յաւիտեան կը մնան անփոփոխ: Նման արեւին, զոր երբեմն չենք տեսներ երկնակամարին վրայ, սակայն գիտենք թէ ան միշտ հ'ոն է: Անոնք որոնք կը խորհին թէ արդարութիւնն ու ճշմարտութիւնը խաբկանք են միայն կամ լոկ բառեր, չարաչար կը սխալին, որովհետեւ անոնք իրաւ են, գոյութիւն ունին եւ անպայման օր մը պիտի յաղթանակեն, եւ արդարութեան դրօշը պիտի փողփողէ անիրաւեալներու հայրենիքի երկնակամարին վրայ:

Քրիստոսի Յարութենէն ետք, մարդիկ՝ այդ օրերու երանեալները եւ իր անմիջական հետեւորդները, անոնք՝ որոնք առանձնաշնորհումը ունեցան ըմպելու քրիստոնէական կեանքի ճշմարտութիւնը՝ ի՛ր իսկ ակէն, տեսան զինք ու աւելի ամրացուցին իրենց հաւատքը: Ու Սուրբ Աւետարանը շարունակելով կ'ըսէ. «Որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատացին», երանի անոնց՝ որոնք առանց տեսնելու այդ աղբիւրը կը հաւատան ու կ'ըմպեն անկէ:

Քրիստոնեան պարտի հաւատալ եւ ընդունիլ թէ Քրիստոս մեռած չէ, որովհետեւ լաւ գիտէ թէ անոր սէրը անմահ է, եւ մենք ամէն օր կը տեսնենք զինք իր գործին մէջ ապրող ու շնչող: Ինչպէս որ ցորենի հասկը բազմապատկուած է ցորենի հատիկին, քրիստոնէութիւնը եւս բազմապատկուած աճն է Քրիստոսի աւետարանական կեանքի իսկութեան, Անոր կեանքի ապրուած փորձառութեան, որ Եկեղեցին է ինքնին: Յարուցեալ Փրկիչը վերընծիւղեալ ցորենահատը եղաւ, որուն անսահման սէրէն եւ անձնուիրութենէն կազմուեցաւ իր Եկեղեցին, «ատոք ի հասկին», ուր դարերէն ի վեր թափուր գերեզմանին հովանիին ներքեւ կ'աճի մեր քրիստոնէական հաւատքը: Եւ այդ հասկի հատիկներէն մէկն ալ եղաւ Հայ ժողովուրդը իբր ազգ եւ եկեղեցի: Մենք՝ Իրեն համար մեր չարչարակից ու տանջուած ըլլալու բացարձակ իրաւիւնքը կը կապենք իր Յարութեան փառքին, որովհետեւ մեր մէջ ապրող իր կեանքին ու մեր հաւատքը յաւերժացնող իր սիրոյն մէջ է, որ կը զգանք զինք, եւ մեր վիշտերուն մէջ իր վէրքերն են որ կը համբուրենք՝ բուժելու մեզի տրուած վէրքերը: Եւ արդէն ի՞նչ կը ներկայացնէ Ջատիկը ինքնին, թափուր գերեզման մը, որ յոյս կու տայ անյոյս աշխարհին: Ջատիկը սովորական բան մը չէ, որուն մենք քրիստոնեաներս կը հաւատանք. ան իրականութեան մէջ առանցքն է, կեդրոնն է մեր հաւատքին, եւ մեր գոյութիւնը կախեալ է անկէ, սակայն դժբախտաբար մենք կ'անդրադառնանք ասոր ճշմարտութեան երբ միայն կեանքը հարուածէ մեզի:

Թերեւս մահը ձմրան նման գայ ու իր թեւերը տարածէ երկրի վրայ, սակայն գարնան՝ հողը ետ կեանքի գալով իր ընդերքի գաղտնիքները, իր գունագեղ ծաղիկներուն եւ ծառերուն համեղ պտուղներուն միջոցաւ անգամ մը եւս պիտի պատմէ մարդուն: Լաւ է գիտնալ թէ ճշմարտութիւնը անմահ է. մենք կրնանք ամբաստանել, ճնշել եւ դատապարտել զայն իբր սուտ, նոյնիսկ չարչարել, սպաննել ու թաղել, սակայն վստահ եղէ՛ք թէ ան երրորդ օրը յարութիւն պիտի առնէ: Քրիստոնեան միշտ պարտի յիշել թէ ինք զաւակն է Երկնաւոր Հօր եւ քանի որ ինք ծնած է Քրիստոսի մկրտութեան աւազանով նոյնիսկ եթէ ան մեռնի պիտի արժանանայ անոր յարութեան փառքին, յաւիտենական ողորմածութեան, գութին եւ ներողամտութեան:

Աստուածորդւոյն Յարութեան այդ հրաշալի եւ բացառիկ դէպքը պիտի գար անսովոր կերպով փոխելու կեանքը ո՛չ միայն իր առաքեալներուն եւ աշակերտներուն, որոնք տեսնելով իրենց Յարուցեալ Փրկիչը կրկին կեանքի կոչուած, դարձան անվախ ու համարձակ, որովհետեւ անոնք վերջապէս անդրադարձած էին այն իրողութեան՝ թէ իրենց Տէրն ու Վարդապետը միանգամ ընդմիշտ յաղթահարած էր մահը: Մեծ է թիւը անոնց՝ որոնք այսօր գիտեն պատմութիւնը Յարութեան, բայց քիչեր կը հաւատան այն նոր եւ յաւիտենական կեանքին, որ Քրիստոս իր Յարութեամբ կու գար տալու մարդկութեան: Դժբախտաբար, ինչպէս որ 2000 տարիներ առաջ մարդիկ կասկածով ու թերահաւատութեամբ առին Յարութեան աւետիսը, տակաւին մինչեւ այսօր նոյնն է իրենց դիրքորոշումը Ջատիկի վերաբերեալ, որովհետեւ տակաւին անոնք չեն թափանցած Յարութեան տօնին իրա՛ւ իմաստին: Սակայն սիրելի ժողովուրդ հայոց, Ջատիկը

կու գայ մեզի յիշեցնելու թէ երկնքի օգնութիւնը մեր ենթադրածէն աւելի մօտ է մեզի, եթէ միայն ... մենք հաւատանք: Հաւանաբար Չարչարանաց, Խաչելութեան եւ Թաղման այդ բոպէներուն առթած վիշտի արցունքները պատճառ կ'ըլլային որ աշակերտներն ու կիները չտեսնէին թէ հոն Մէկը կար որ զիրենք կը սպասէր, որ մեղմիւ պիտի խօսէր իրենց հետ տալով իրենց անունները ըսելով. «Զի՞ լաք», որմէ ետք միայն անոնք պիտի անդրադառնային որ ան կենդանի էր, ողջ էր, ու յանկարծ այդ յուսահատ եւ յուսախար աշակերտներուն համար նոր կեանք մը պիտի սկսէր, դարձեալ լոյսը պիտի ծագէր իրենց սիրտերուն մէջ եւ երջանկութիւնը սողոսկէր իրենց կեանքերէն ներս:

Սուրբ Զատիկուայ գլխաւոր պատգամը այն է՝ սիրելի ընթերցող, որ Աստուածորդին 2000 տարիներ առաջ ո՛չ միայն յարութիւն առաւ մեռելներէն, այլ Ան տակաւին կ'ապրի ու մեր հետ է յաւիտեան: Զատիկը կու գայ մեզի վերյիշեցնելու թէ ի զուր չնայինք թափուր գերեզմանէն ներս, որովհետեւ հրեշտակը մեզի պիտի ըսէ. «Զի՞ լաք, զո՞ խնդրէք, չէ աստ այլ յարեալ»:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Յարեալ ի Մեռելոց:**

